

Հ Ա Գ Վ Ա Մ Ն Ե Ր

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՐԳԻԾԱՎԵՊԻ ՎԱՐՊԵՏԸ
(Ե. Օտյանի ծննդյան 100-ամյակի առթիվ)

Ս. Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ

Հայ գրականության պատմության մեջ իր բեղմնավորությամբ Երվանդ Օտյանը եղակի դեմք է։ Նա ծնվեց (1869-ի սեպտեմբերի 19, Կ. Պոլիս) մեծահամբավ մտավորականների բարեկեցիկ ընտանիքում և փայլուն կրթություն ստացավ։ Սակայն սկսած 1896-ից ստիպված էր հեռանալ ծննդավայրից և թափառել աշխարհի տասնյակ երկրներում։ Տարադիր պանդուխտը նյութական կառիքները հոգալու համար տարիներ շարունակ կատարեց հաշվակալ-գանձապահի, քարտուղարի, լրագրողի հոգեմաշ աշխատանք։ 1915-ի ապրիլյան եղեռնին նա ևս ձերբակալվեց, քշվեց փղշտական անապատները, մոտ երեք տարի առապեց սովի, սարսափի, սարսռեցուցիչ եղեռնապատկերների¹ դժոխսյին ճամբարներում և միայն հրաշքով կենդանի մնաց։ Թափառեց, տառապեց, ֆիզիկապես հյուծվեց, հոգով դառնացավ, հաճախ հարկադրաբար վար դրեց գրիչը։

Ահա ինչու ստեղծագործական սխրանք պետք է համարել, որ այդուհանդերձ Երվանդ Օտյանը դարձավ «ծիծաղի համար ծնված մեծագույն հայ երգիծաբանը»² և սերունդներին թողեց իսկապես մի «իշխանական ժառանգություն»³։ Որը զարմանք և հիացմունք է պատճառում թեմատիկ-ժանրային բացառիկ բաղմազանությամբ և արտասովոր հարստությամբ։ Մի ժառանգություն, որտեղ տեսնում ենք հայ դասական արձակի գանձարանը մտած երգիծական արվեստի մի ամբողջ շարք հրաշակերտ հուշարձանների։

Երվանդ Օտյանին վիճակվեց ո՛չ դյուրին, բայց պատվավոր մի խնդիր՝ հաջորդել և փոխարինել «հայոց առաջին զվարթագիր երգիծաբան»⁴ Հակոբ Պարոնյանին։ Իհարկե, պարոնյանական թափուր արքայական գահին բազմելու հավակնորդներ չէին պակասում։ Բայց Օտյանը միակն էր, որ կարող էր

1 Ե. Օտյան, Սեպիլին վրաններուն տակ. տե՛ս Թեոդիկ, «Ամենուն տարեցույցը», 1921, էջ 91,

2 Ա. Երվանդանդե, Երկերի ժողովածու, Երևան, 1961, հ. 8, էջ 524,

3 Միքայել Ս. Կյուրճյան, Իր հիշատակին. տե՛ս Թեոդիկ, «Ամենուն տարեցույցը», 1928, էջ 462,

4 Երվանդ Օտյան, Երկերի ժողովածու վեց հատորով, Երևան, 1962, հ. 4, էջ 14 (Այսուհետև սույն հրատարակությունն իբրև աղբյուր նշվելու է բուն շարադրանքի մեջ՝ ըստ հատորների և մեջբերված էջերի։ Գեղարվեստական ստեղծագործություններից քաղվածքների աղբյուրը չի հիշատակվելու)։

հանճարեղ Թումանյանի պես ասել. «Ճոխ պարզև եմ առել վերուստ»՝ շարունակելու և առաջ մղելու համար թե՛ անմիջական նախորդի, թե՛ առհասարակ անցյալի հայ երգիծական արվեստի ուսանելի ավանդույթները: Իզուր չէ, որ տակավին 1900-ին, երբ նոր պիտի ամբողջ հզորությամբ փայլեր Ծ. Օտյանի երգիծական քանքարը, լոնդոնի «Նոր կյանքը» (խմբ. Ա. Արիիարյան և Լ. Բաշալյան) արձանագրել է, թե նա արդեն դրսևորել է «այն փայլուն հեզնությամբ և սուր ու ոգելից երգիծանքի գերազանց հատկությունները, որոնք արդի հայ մատենագրության այդ ճյուղին մեջ առաջին տեղը դրվել տված են իրեն աներկբան»⁵: Իսկ մեկ տարի անց՝ 1901-ին, հեղինակավոր բանասեր Ա. Զոպանյանը հավաստել է. «Իր «Հայրենիքին» հողվածները, ինչպես նաև հեզնական բազմաթիվ էջերը, զոր ցրցքենց վերջերս արտասահմանի մամուլին մեջ, զինքը կացուցած էին Պարոնյանի հաջորդը»⁶:

Հիրավի, հաջորդելով ծաղր ու ծիծաղի անզուգական վարպետ Հ. Պարոնյանին, Ծ. Օտյանը հուժկու զարկ տվեց երգիծանքի տարբեր ձևերի ու միջոցների՝ ձաղի, ալպանքի, հեզնանքի, հումորի, պարսավի, կոմիզմի տարատեսակների (խոսքի, դրության և այլն)⁷ և երգիծական բոլոր ժանրերի ու կտավների աննախընթաց զարգացմանը՝ սկսած երկբառյա սրամիտ խոսքից ու մանբանկարային աֆորիզմից մինչև լայնահուն, բազմասյուժե երգիծավեպը:

Շատ են Ծ. Օտյանի մատուցած ծառայությունները մեր ժողովրդի հոգևոր և մտավոր մշակութուն, որին նա նվիրաբերեց իր բոլոր ուժերը: Գրականությունը եղավ նրա սերը, ընտանիքը, անձնական աշխարհը, ինչպես ինքն է ասել՝ «կյանքիս միակ զբաղումը» (հ. 4, էջ 12): Ամենից առաջ՝ նրա անվան հետ է կապված հոսանքային հոսանքների և հոսանքների ժամանակաշրջանի (1891—1926) հայ երգիծաբանության պատմությունը, ինչպես նաև՝ քննադատական ոեալիզմի արևմտահայ վիպագրության զարգացման բարձրակետը: Այս են հաստատում «Միջնորդ տեր պապան» (նախնական խորագրով՝ «Գործ եփող մր»), «Ընտանիք, պատիվ, բարոյական», «Թաղականին կնիկը», «Ես դրսեցի չեմ առներ», «Ազգային բարեբարը», «Գործի մարդիկ», «Վաճառականի մը նամակները կամ կատարյալ մարդ ըլլալու արվեստը» և մյուս սոցիալական երգիծավեպերն ու երգիծավիպակները:

Հայ ոեալիստական արձակի հոյակերտ էջերի շարքին պատկանող այս երգիծակտավներում հեղինակն անխնա ծաղրել ու խարանել է բուրժուա-սեփականատիրական աշխարհի սոցիալական շարիքները, անարդար օրենքները, հասարակական, ընտանեկան, բարոյական արատները, «մարդը մարդուն դայլ» գիշատչական սկզբունքը, փողի պաշտամունքը, կեղծիքն ու խաբեությունը: Ուր ու սպանիչ է օտյանական ծաղրը դեպի աշխարհիկ և կրոնական այն հարստահարիչները, որոնց համար «անբարոյականությունը... ծիրանազարդ պատմուճան մըն է, կավատությունը՝ պատվանշաններով վարձատրվելիք արժանիք մը, շողոթորթությունը և պնակալությունը՝ սլատվավոր միջոցներ՝ դիրք շինելու համար» (հ. 1, էջ 582): Հյուսելով վիպական փայլուն գործողություններ, կենսական բախումներ, տիպական հանդամանքներ, Ծ. Օտյանը

⁵ «Նոր կյանք» (լոնդոն), 1900, № 6, էջ 96:

⁶ Տե՛ս «Անահիտ» (Փարիզ), 1901, № 12, էջ 295:

⁷ Ծ. Օտյանի երգիծական արվեստի և ընդհանրապես կյանքի ու դործի մասին տե՛ս Ա. Մակարյանի մենագրությունը՝ «Երվանդ Օտյան», Երևան, 1965:

կերտել է նշված արատները մարմնավորող բացասական մի շարք լիարյուն տիպեր՝ «ղբսից քահանա, ներսից սատանա» Տեր Բարսեղ («Միշեորդ տե՛ր պապան»), «դողովյամբ պարկեշտացած» անազնիվ «ազնվաշուք» Ղուկաս էֆենդի («Ընտանիք...»), կեղծ «ազգային բարերար» Սահակ էֆենդի («Ազգային բարերարը»), անբարոյականության, երկերեսանության, հապաշտության «գաղափարախոս» Գողմա («Վաճառականի մը նամակները...») և ուրիշներ։

Քննադատական ոնալիդմի ցայտուն նմուշներ են նաև Ե. Օտյանի առաջին իսկ ինքնատիպ երգիծական նորավեպերը, պատմվածքները, զրոնիկները՝ «Վաշխառուն», «Կաղանդի վիպակ», «Համբարձում աղա», «Բարի դահիճը», «Ազնվաշուքների շուրջը», «Շաբաթական քրոնիկ», «Բերայի մեք» շարքը և այլն։ Ի դեպ՝ օտյանական քրոնիկները սեղմ ու սրամիտ ֆելիետոններ են, որոնցով տակավին 1890-ական թվականներին նա եկատարյալ փոթորիկ մը հարուց մասնավորաբար Բերայի բարձր դասին մեք» (Հ. 4, էջ 25)։ Եվ իրավ է դիտված, թե քրոնիկը մանավանդ իրմե ավելի մեծ վարպետ մը լուսնցավ մեր մեք»⁵։

Ե. Օտյանի գրչին են պատկանում ոչ միայն նշված, այլև շատ ուրիշ ծավալուն, հաճախ բազմահատոր վեպեր և վիպակներ՝ «Մարգարիտի մանյակ», «Անիծյալ տարիներ», «Թիվ 17 խաֆիեն», «Կանաչ հովանոցով կինը», «Ենոր հարուստներ» և այլն։ Անթերի չեն սրանք, սակայն նույնպես վկայում են հեղինակի հարուստ կենսաճանաչողության, անսպառ աշխատունակության մասին և ուշագրավ են իրենց հակապատերազմական, հումանիստական բովանդակությամբ։ Ժանրին հատուկ հետաքրքրաշարժ սյուժեներով, աշխուժ պատմելիքով և, որ կարևորն է, բռնակալության ու հետազննության մերկացման ուժով մեղանում անմրցելի են պատմա-իրական թեմաներով հյուսված օտյանական դետեկտիվ-արկային վեպերը՝ «Ապստյուլ Համիտ և Շերլոք Շոլմս», «Սալիհա հանրմ կամ բանակը բռնավորին դեմ», որոնք թարգմանված են ֆրանսերեն, հունարեն, թուրքերեն, արաբերեն։

Ե. Օտյանի «Զավալլուն» ողբիլը և «Ֆրանքո-թուրքական պատերազմ կամ լարշըլը Արթին աղա» (հեղինակված Միքայել Այուրճյանի հետ համատեղ) կատակերգությունը մեր թատերագրության այն գործերից են, որոնք ստեղծման օրից բեմադրվում են։ Իսկ նրա «Տասներկու տարի Պոսեն դուրս» փաստալից գիրքը մեր հուշագրական գրականության զարգերից է և աչքի է ընկնում ոչ միայն ճանաչողական նշանակությամբ, այլև գեղարվեստական հնչեղությամբ։

Ե. Օտյանը շատ շահեկան գործ է կատարել՝ թարգմանելով Լ. Տոլստոյի «Հարությունը», «Աննա Կարենինան», Ֆ. Դոստոևսկու «Մեռնիներու տան հիշատակները», էմ. Զոլայի «Արգասավորությունը», Մ. Տվենի «Աղքատ և իշխանը» և տասնյակ այլ ստեղծագործություններ։ Նա միաժամանակ բազմաթղթուն բանասեր էր և հմուտ գրադատ։ Նրա պատմա-բանասիրական հետազոտությունները (Անտիոքի, Կենդաստրայի, հունաց հայազն թագուհի Թեոդորայի, «Աստվածաշնչի», հայ ազգային-գրական անվանի գործիչներ Գր. Օտյանի, Ն. Ռուսիեյանի, Մերենցի մասին և այլն) և մի շարք հոդվածները (Բաֆթու-

⁵ Վ. Թևթյան, Գաղաղին առն, տե՛ս Քեդիկ, «Ամենուր տարեցույց», 1928, էջ 457—458։

Հ. Տոլստոյի, Պ. Դուրյանի և ուրիշների մասին) ցույց են տալիս հայ և համաշխարհային պատմագրությանը, գրականությանը, մշակույթին քաջածանոթ հեղինակի հարուստ գիտելիքները, վերլուծող միտքը, կարող գրիչը: Ըստ որում՝ արդեն 1894-ից նրա գեղագիտական դավանանքն այն էր, թե «Զէ՛, միայն աղեկ-գրված դիրքերը չեն, որ կը մնան, այլ մանավանդ անոնք, որոնք ժողովրդի սրտին մոտիկ կը խոսի՞ն»⁹:

Վերջապես՝ նա տարիներ շարունակ կենդանություն ու վիայլ է տվել հայ երգիծական մամուլին: Նրա խմբագրած պարբերականներից շատերը՝ «Ազատ բեմ», «Ազատ խոսք», «Կառափնատ», «Մանանա», «Իգնատ աղա», «Իրգիծական տարեցույց» և այլն՝ համարյա ինքնուրույն ստեղծագործություններ են: Ու բոլորին էլ վերաբերում է «Իգնատ աղային» Շիրվանդաղեի տված խոսուն բնութագիրը, ըստ որի այդ շաբաթաթերթը «աղղային խեղկատակների, կեղծ մարգարեների, ինքնակոչ զիպլոմատների, անխիղճ վաշխառուների և մանավանդ գրական շառլատանների ահն ու սարսափն էր»¹⁰:

Այս բոլորն, ահա, հայ գրականությանը մատուցած Երվանդ Օտյանի անգնահատելի ծառայություններն են: Սակայն դրանցից մեծագույնն այն է, որ նա նոր խոսք ասաց, նոր ակոս բացեց հատկապես մեր քաղաքական երգիծարանության մեջ: Անցյալ դարավերջի և ներկա դարասկզբի բարդ ու տենդաֆուլ ժամանակաշրջանում, որը շիկացած էր քաղաքական ցնցումներով, աղղային-ազատադրական, սոցիալական ու հեղափոխական բուռն շարժումներով, պատերազմներով, հասարակական հեղաբեկումներով, նա ժառանգեց ու զարգացրեց քաղաքական երգիծանքի ականավոր վարպետ ԼԴԻՔ. Նալբանդյանի, Հ. Սվաճյանի, Ստ. Ոսկանյանի, Ռ. Պատկանյանի, Հ. Պարոնյանի և մյուսների դեմոկրատական, առաջավոր ավանդները: Պատահական չէ, որ իր խմբագրած «Կառափնատը» (1910) նա համարել է «1793-ի թոռնորդի, 1848-ի թոռ և 1860-ի զավակ» (հ. 4, էջ 685): Արդարև, նրա երազանքն էր աշխարհում հաստատված տեսնել վաղուց արդեն հռչակված ու շիրագործված «Ազատություն, Հավասարություն, Եղբայրություն» իդեալները: Արդարև, նրա սրտին ու մտքին հարազատ էին ոուս հեղափոխական-դեմոկրատ 60-ականների և նրանց զինակից Միքայել Նալբանդյանի¹¹ ազատասիրական, մարդասիրական վեհ գաղափարները, անձնվեր պայքարը բռնակալության, «խավարի թագավորության», սոցիալ-քաղաքական և ազգային ճնշման ու ստրկության դեմ: Ահա ինչ է դրել նա նույն «Կառափնատի» էջերում. «Մեր կոիվը ստության, կեղծիքի, շահագործության, խաբեբայության դեմ է. և եթե անձերով կզբաղինք, հաճախ պատճառը այն է, որ այդ անձերեն ամեն մեկը իր մեջ կմարմնավորե ստության,

⁹ Տե՛ս «Հայրենիք» օրաթերթը (Կ. Պոլիս), 1894, ապրիլի 6:

¹⁰ Ա. Մ. Շիրվանդաղե, հ. 8, էջ 526:

¹¹ Միքայել Նալբանդյանը 1860-ին Կ. Պոլսում հյուրընկալվել է Օտյանների հարկի տակ ու ամենքի վրա խոր տպավորություն են թողել նրա ժողովրդի ոգին և բոցաշունչ ազատասիրությունը (Ա. Ինճիկյան, Միք. Նալբանդյանի կյանքի և գործունեության տարեգրությունը, Երևան, 1954, էջ 325): Նույն թվականին Փարիզում նա ծանոթացել է Երվանդի հոր՝ հաշիկ Պողոսի Օտյանի (1842—1908) հետ, որին և ձոնել է «Կրիտիկա Սոս և Վարդիթերի» նշանավոր աշխատությունը մի մտերմիկ ընծայականով. «Սիրական եղբոր, Խ. Պ. Օտյանին, նվեր»:¹² Ինքը՝ Երվանդը՝ Նալբանդյանի հռչակավոր «Ազատություն» երգի նմանողությամբ դրել է Պոլսի պատրիարք Մ. Օրմանյանի դեմ ուղղված «Օրմանյանի երդը» երգիծական բանաստեղծությունը (տե՛ս հ. 1, էջ 550—551) և առհասարակ սիրով ու ականածանքով է խոսել մեծ մտածողի, գրողի ու գործչի մասին:

կեղծիքի, շահագործության կամ խաբեությունից ալազան երևույթներն մեկը:

Իսկ մեր մարտական միջոցները.

— Ո՛չ սոփա (մահակ— Ս. Մ.), ո՛չ դաշույն, ո՛չ պրատնիկ, ո՛չ ալ պոմպա, ալլ միայն ծաղր ու ծաղրանկար» (Տ. 1, էջ 685—686):

Հյուսելով հիրավի կայծակի պես շանթոզ իր քաղաքական երգիծանքը. Ծ. Ստյանը հետապնդել է ազնիվ ու բարի, հասարակական հանրօգուտ նպատակ՝ ծաղրել ու ձաղկել աղջային-աղատազրական և հեղափոխական պայքարի ասպարեզում առկա սկեղծ փրկիչները, սուտին ճարտարապետները, զոզքոված համբավները... հաշվոդ խանդավառները, անկեղծության աճպարհները. հայրենասիրության ձեռնածուները...» (Տ. 1, էջ 553—554): Ու այդպես էլ վարվել է, հրաշակերտելով քաղաքական մեծարվեստ երգիծակտավներ, որոնցից առաջինը «Հեղափոխության մակարույծներ» պատմվածքների շարքն է (1897—1899): Այստեղ սուր ձաղի, ալպանքի ու հեղեանքի լեզվով խոսվում է մեր մեջ հեղափոխական շարժումնն ծնած կարգ մը հարանուններու նշանակության մասին» («Արտասահմանի գործիչը»)։ «Հեղափոխական», «հայրենասեր», «հերոս»՝ ձեռքոց, իրականում՝ պորտաբույծ, պոռոտախոս, դրամաշորթ եզործիչներ» են դրանք, երգիծաբանի դիպուկ բնութագրմամբ՝ «անվավեր հերոսներ» («Անվավեր հերոսներ»), որոնք արատավորում են ամեն մի սուրբ քաղափար ու նվիրական զգացում:

Յուրաքանչյուր պատմվածքում կերտելով խորապես անհատականացված մի կերպար, Ծ. Ստյանը համոզում է, որ դրանք բոլորն էլ հետևում են միևնույն «անձնական սկզբունքին», ըստ որի՝ «Ամեն բանի ժամանակ կա, հեղափոխական ըլլալու ժամանակ և հակահեղափոխական ըլլալու ժամանակ, սոցալու ժամանակ և խայթելու ժամանակ, ճառ խոսելու ժամանակ և հանգանակություն բնելու ժամանակ... ստակ մուրալու ժամանակ և ստակ պանքան ղեկու ժամանակ» («Հակահեղափոխական»): Սա հենց այն սկզբունքայինությունն է, որի մասին իր «Ընթացիկ բառարանում» Ծ. Ստյանը սրամտել է. «Սկզբունքային հալոցը.— Ավելի ճիշտ է ըսել սպունգային հալոցը, բանի որ փարա ծծելու սահմանված են» (Տ. 4, էջ 639): Ընդամեն՝ արվեստի արտոնած սահմաններում սրելով, չափազանցելով՝ հանդերձ երևույթները, երգիծաբանը նկատի է ունեցել իրական ղեմքեր, իր հուշագրությունների մեջ ևս նրանց որակելով «ճշմարիտ խաբեբաներ... որոնք կուզեն շահագործել ժողովրդի խանդավառությունը» (Տ. 4, էջ 130, տն՝ ս նաև՝ էջ 107—108, ուր խոսվում է «խմրագիրը» պատմվածքի նախատիպի մասին): Նման մի խաբեբա մակարույծ է նաև Կերավյանցը՝ ինքնդիներ «ազգի փրկիչ» հորդորող, բայց կյանքում «պարզապես էտնպսղ խաչագողը» («Ճուղուպրիտ և բնկ» երգիծավիպակը): Աղջային, կուսակցական, զրական կենդանի, իրական գործիչների երգիծական դիմանկարներ գծելու տեսակետից նշանակալից են «Մեր կրեատիվաները», դիմանկարներ, որ ստեղծված են «Աղջային ցուլերի» անմահ հեղինակ Պարոնյանի վարպետությամբ և օտյանական ինքնատիպ ոճով ու ոգով:

Չխոսելով բազմաթիվ ֆելիետոնների, պարսավազրերի, ծանակազրերի, սրամիտ բառարանների, երգիծական տարեցույցների մասին («Անօգուտ բացատրություն», «Համահավասար գոհողություն», «Բաց նամակ մեր հույն հայրենակիցներուն», «Վերնատունեն», «Թանկն»-ի խելը դուրս կուզա վերա-

պես», «Երգիծական տարեցույց» և այլն), նշենք, որ բոլոր դեպքերում Ե. Օտյանը հետևել է երգիծական իր հավատամքին՝ «Պիտի խնդանք՝ առանց քեն կամ ոխ, ատելություն կամ նախանձ խառնելու մեր ծիծաղին մեջ, որովհետև ծիծաղը սուրբ, աստվածային է» (հ. 1, էջ 581)։ Ու բոլոր դեպքերում նրա քաղաքական երգիծակտավների հիմնական արժանիքն այն է, որ երգիծաբանն օգնել է ժամանակակիցներին և այսօր էլ օգնում է «զանազանելու ճշմարիտը կեղծեն...», հարազատ հերոսը՝ անվավերեն» («Անվավեր հերոսներ»)։

Ահա այս տեսակետից էլ երգիծական արվեստի գլուխգործոցներ են Ե. Օտյանի «Պրոպագանդիստը» և «Ընկեր Բ. Փանջունի» քաղաքական երգիծավեպերը, որոնք աննախընթաց երևույթ էին և որոնց կուզենայինք անդրադառնալ քիչ ավելի հանգամանորեն։

«Պրոպագանդիստը» (1900) մեղանում առաջին քաղաքական երգիծավեպն է, որի մեջ հեղինակը, ինչպես ինքն է գրել, նպատակ է ունեցել պատկերելու «հեղափոխականներու խաչագողությունները»¹²։ Եվ իրոք, վեպում ներկայացվում են «հեղափոխականներ», որոնք իրենց շահատակություններով գերազանցում են մեծ Լ'աֆֆու հրաշակերտած խաչագողներին։ Կենտրոնական դեմքը խոստուն ազգանուն ունի՝ Կուլտամյանց և սկզբից մինչև վերջ գիմում է իր ազգանունին վալել արարքների։ Խորամանկ, խարդախ, կովազան այդ մականբույծը նախ փորձում է դրամ և փառք վաստակել մանկավարժության մարզում։ Բայց անպտուղ ու աղմկալից «գործունեության» համար կամ իրեն են վոնդում, կամ «ինքր կովելով կձգեր կերթար»։ Էտո՝ «գործունեության լավագույն դաշտ մը՝ հեղափոխության շահագործումը կհրապուրեր զինքը»։ Վճռելով ոտք դնել այս նոր ասպարեզը, նա շի մտնում Կ. Պոլսում «արդեն գործող կուսակցության», այսինքն՝ հնչակյանների շարքերը, «որուն մեջ միայն երկրորդական դեր մը կրնար խաղալ, ավելի վտանգալից գուցե, քան շահութաբեր», այլ իր ծառայությունն է առաջարկում «Եվրոպա կեդրոնացած հեղափոխական» կուսակցության մը (իմա՝ դաշնակցության — Ս. Մ.), որ դեռ Պոլսո մեջ որոշ մարմին մը չունենա»¹³։ Նրանից պահանջում են գործունեության ծրագիր, որպիսին «հատ մը շինեց և անմիջապես ղրկեց»։ Քառասուն հոգով Պոլսո տիրելու հսկայական խորհուրդն էր»։ Զարմանալով հանդերձ Կուլտամյանցի «հանդուգն երևակայությամբ», ծրագիրը հավանում են և նրան նշանակում կուսակցության լիազոր-ներկայացուցիչը Կ. Պոլսում։ Եվ ահա, կազմակերպելով «հեղափոխական խումբեր», նորոնծա «պրոպագանդիստը» սկսում է... դրամական նպաստներ հավաքել՝ «Պոլսո տիրելու» համար։ Շուտով բավականին գումար է գոյանում և ընդհանրապես խորամուկի ապագան ապահովելու կարելիությունը, Կուլտամյանցը որոշում է միայնակ կուլ տալ հավաքված

¹² Տե՛ս «Վերջին լուր» (Կ. Պոլիս), 1921, օգոստոսի 24։

¹³ Բանասեր Ա. Մակարյանը գտնում է, թե «Կուլտամյանցը հավանաբար ոչ այլ ոք է, եթե ոչ Հ. Յուսուֆյանը, որը եղել է Պոլսո դաշնակցական կազմակերպության ստեղծողը» (տե՛ս նրա «Ենթական Օտյան» գիրքը, էջ 207)։ Հավանական է, Միայն ավելացնենք, որ Կուլտամյանցի կերպարը կերտելիս երգիծաբանը նկատի է ունեցել նաև ուրիշ դեմքեր։ Այսպես, օրինակ՝ 1896-ին Մամանյան բանկը գրավելու փորձին մասնակցած Արմեն Գարոն (Կարո) Ե. Օտյանին պատմել է, թե ինքն սկզբում ցանկացել է իր «անձն ու դրամը» դնել հնչակյանների տրամադրության տակ, բայց Ավ. Նազարբեկը հեղանքով պահանջել է միայն դրամը («անձի պետք չունինք...»), ուստի ինքը, վերավորված, դիմել է դաշնակցականներին, «որոնք գրկաբաց կընդունին զինքը» (հ. 4, էջ 87)։ Ինչպես տեսնում ենք, նույն քայլն է կրկնում Կուլտամյանցը, թեև, իհարկե, այլ զրդապատճառներով ու նկատառումներով։

ոսկիները: Բայց այդ «վճռական պահին» ժամանում է կենտրոնի ներկայացուցիչ Ինձելտուրյանցը: Տեղ հասնելուն պես՝ նա Կուլտամյանցի հետ մեկնում է... ճաշարան, որտեղ և դրամների տնօրինության առթիվ «ղարդացնում» է իր աղղանունին հարմար «իմաստասիրական տեսություն»: Նա ասում է. «Աշխարհքումս մարդը մի միկրոկոզմա է... Հայրենասիրությունը և հեղափոխությունը պետք չէր, որ իր շահերեն ղրկեին միկրոկոզման, որ իր մեջ կր պարունակե արդեն ավելի ներքին ու ավելի բնական հայրենիք մը: Կուլմոսը չէր կրնար իդեալական վիճակի մը հասնիլ մինչև որ մեն մի միկրոկոզմա շունենար իր սեփական բարգավաճությունը... Հետևաբար՝ ժողովված դրամները պետք էր բաժնել երեք մասի, մին իրեն, մյուսը Կուլտամյանցի, և մնացածը կեդրոն ղրկելու համար»: Նույնիսկ Կուլտամյանցի պես անձնապաշտ պորտաբույծը դարձանում է այդ «տեսությամբ». «Ի՛նչ սկզբունք, նկարագիր, ի՛նչ կորույ, ի՛նչ ստամոքս... Միկրոկոզման զորացնել, աղատ, անկախ, բարգավաճ վիճակի մը հասցնել, ահա՛ փրկությունը, ահա՛ բուն հեղափոխությունը»:

Ու հրավիրելով «խումբերի պետերին», նա պաթետիկ ճառ է ասում. «Հա՛, ձեզ տեսնեմ, տղե՛րք, անձնվիրաբար աշխատեցե՛ք. ազատություն կամ մահ. այս է մեր դեիզը. Մայր Հայաստան ձեզի կնայի արտասովալից աչքերով և «Վրե՛ժ» կմրմնջե...». իսկ ինքն «անձնվիրաբար» գրպաննելով ոսկիները՝ ճողոպրում է Պոլսից, գտնելով, որ «եթե ազգը ամբողջովին կարելի չէ փրկել, փրկենք զոնե ազգին մեկ անհատը»... Ինձելտուրյանցն ու մյուսները որոնում և այդպես էլ չեն գտնում դրամաշորթ «պրոպագանդիստին»:

Վեպն այստեղ ընդհատվում է: Այն թերավարտ է մնացել, քանզի «Նոր կյանք» (Լոնդոն) հանդեսի խմբագրության մեջ Ա. Արփիարյանին և Լ. Բաշալյանին փոխարինած վերակադմյալ հնչակյանները մերժել են շարունակել «գավազտական դրություններու» տպագրությունը (հ. 4, էջ 213): Բայց ի՞նչու հետագայում ևս Ն. Օտյանը չի ավարտել այն: Հավանաբար այն պատճառով, որ իր հիմնական մտահղացումը համարել է արդեն իրականացված: Շարունակության մեջ թերևս պատկերվեին «Պոլսո տիրելու» ցնորական ծրագրի «կենսագործման» հետ կապված դեպքերը: Բայց առանց այդ էլ երգիծական համոզիչ արվեստով ցույց է տրված այդ ծրագրի արկածախնդրական բնույթը, Կուլտամյանցի բուն նպատակը և խոսվում է նրա ստեղծած «խումբերի» շահատակությունների հետևանքով Պոլսում սկսված խուլարկությունների ու ձերբակալությունների մասին: Ակնհայտորեն նկատի ունենալով 1896-ի օգոստոսի 14-ին ղաշնակցականների ձեռնարկած «բանկի ցույցը», որը նպատակ ուներ եվրոպական պետությունների ուղադրությունը հրավիրել «արյունոտ սուլթանի» կազմակերպած հայկական ջարդերի վրա և առիթ ծառայեց, որպեսզի բուն Պոլսում նույնպես սկսվեն հալածանք ու կոտորած, երգիծաբանը այսպես է ներկայացնում Կուլտամյանցի հորինած ծրագիրը. «...Առտու մը հանկարծ՝ «հեղափոխությունը» պիտի տիրանար Պոլսո, ձեռք անցընելով անոր բոլոր ռազմական կետերը և կարմիր դրոշակը ծածանեցնելով Ղալաթիայի աշտարակի ծայրը...»:

Այդ հանդուգն գործը կատարելն ետքը, «հեղափոխականները» պիտի ջանային իրենց գրաված դիրքերը պահել գոնե շաբաթ մը: Այդ ժամանակամիջոցը բավական էր եվրոպական անխուսափելի միջամտությունը առաջ բերելու և

վեց պետությանց մարտանավերուն ներկայությամբ կարգադրելու հայկական խնդիրը դեսպանախորհրդի մը մեջ»։

Այսօրինակ ցնդաբանության ի՞նչ «կենսագործման» մասին կարող էր գրել երգիծաբանը, որը միաժամանակ ծագրել է այդ ծրագիրը «իրականացնելու» կոչված «հեղափոխական խումբերը»։ Սրանք մեծագույնը անուններ ունեն «Առուծ թաղի Պատուհաս խումբ», «Ոսկեհանք թաղի Վրեժխնդիր խումբ», «Փայլակ թաղի Կայծակ խումբ»... էպպես, սակայն, խրտվիլակներ են։ «Պատուհասի» պետր սահմանափակ, ապաշնորհ մի վարժապետ է, մնացած հինգ անգամներն են՝ նրա քույրը, մի մտագար «կառավարիչ», մի «շահասեր ու շահամուլ» խանութպան, մի դատարկապորտ անգործ երիտասարդ և մի արկածամուլ, ապերասան, անխոհեմ պատանի... «Վրեժխնդիրի» պետը «թե «հեղափոխական» չլլար, հավանական է, որ կամ դրամանենգ՝ կամ մաքսախույս պիտի ըլլար»... Ուրիշ ի՞նչ կարող էին անել խաչագող կուլտամյանց-ինձել-տուրյանցների այդ «խումբերը», քան ժողովներ դումարելը, զաղրախոսություններ դրադվելը, մերթ մուրացկանությամբ, մերթ ահաբեկում-սպառնալիքով դրամ հավաքելը, որոնք և ըստ ամենայնի պատկերված են երգիծավեպում։

Ծիշտ է, «Պրոպագանդիստը» անավարտ է, սակայն ավարտուն կերպարներ են Կուլտամյանցը, Ինձելտուրյանցը, «խումբերի» պետերն ու անդամները, որոնք խոսքով հոշակում են բարձր իդեալներ՝ աղգի աղատություն, հայրենիքի փրկություն, բռնակալության խորտակում, մարդկային հավասարություն և այլն, գործնականում՝ ոտնահարելով ու արատավորելով այդ նույն իդեալները, ծառայելով իրենց անձնական ճղճիմ շահերին։

Խոսքի ու գործի այդ ահավոր հակասության մերկացման տեսակետից էլ ահա երգիծական արվեստի իսկական գոհար է «Ընկեր Բ. Փանջունի» քաղաքական երգիծավեպը՝ «Օտյանի հրաշակերտը, որ վաղուց արդեն դասական գործ մը դարձած է»¹⁴։

Երեք մասից բաղկացած օտյանական այս երգիծավեպը («Առաքելություն մը ի Պապիվար», 1911, «Ընկեր Բ. Փանջունի ի Վասպուրական» և «Իմ աշխարհայացքները», 1914, «Ընկեր Բ. Փանջունի տարագրության մեջ», 1923) բազմիցս հրատարակվել ու վերահրատարակվել է Սփյուռքում, ընդամին՝ ականավոր ծաղրանկարիչ Ալ. Սարուխանի մեծարվեստ նկարազարդումներով։ Մեղանում, ցավոք, տակավին լույս չի տեսել և ծանոթ չէ խորհրդային ընթերցողների լայն շրջաններին։ Բանն այն է, որ ոմանք քաղաքական նպատակներով ու միտումներով, ուրիշները թյուրիմացաբար՝ «Ընկեր Բ. Փանջունին» համարել են բոլշևիզմի և խորհրդային իշխանության դեմ ուղղված ստեղծագործություն¹⁵։

Ծիշտ չէ Հ. Օշականի այն տեսակետը, թե «Փանջունին ծնունդ է հեղափոխական «սլոռշյուր»-ներու դրականության»¹⁶։ Իհարկե, Փանջունին «սոցիալիստական» ֆրադներ է սերտում զանազան «սլոռշյուրներից»։ Սակայն նա կոնկրետ իրականության ծնունդ է և այս մասին համողիչ փաստերով խոսվում է դրականադետ Ս. Մակարյանի «Երվանդ Օտյան» (1965 թ.) մենագրության մեջ։ XX դարասկզբի հայ քաղաքական կյանքը, ազգային կուսակցությունների, մաս-

¹⁴ Ա. Չոպանյան, «Անահիտ», 1936, № 1—2, էջ 110։

¹⁵ Տե՛ս օրինակ՝ «Գործ» (Բաքու), 1917, № 9—10, էջ 114։

¹⁶ Տե՛ս Թեոդիկի «Ամենու՜մ տարեցույցը», 1928, էջ 465։

նախորաբար զաշնակցության տեսությունն ու պրակտիկ գործունեությունը նյութ են ծառայել Ծ. Օտյանի համար՝ հրաշակերտելու փանջունիականությունը, որն իր էությունից ու բնույթով միջազգային երևույթ է։

Միանդամայն իրավացի է Մ. Այուրճյանը, որը զրեւ է. «Հայ տիբացուին զասական տիպարն է ան՝ անմահ ընկեր Փանջունի, որ ցեղահպատակ հաքազատ զիծեր ունենալով հանդերձ, իր շատ մը կողմերով կը պատկանի մարդկային մեծ րնտանիքին — ինչ որ իրավունք կուտա իրեն մտնելու հոշակավոր տիպարներու տիեզերահոգակ պատկերասրահին մեջ և իր տեղը զբավելու սպանացի Տոն քիշոթին, անզլիացի Բիրուիթին և ֆրանսացի Քարթարենին առնեթեր»¹⁷։

Ավելի վաղ՝ նույն միտքը հայտնել է նաև Լ. Բաշալյանը, ըստ որի «Փանջունին Տարտարենի պէս տիեզերահոշակ տիպար մը պիտի ըլլար անտարակույս, եթէ Նովանդ Օտյան ֆրանսացի ծնած ըլլար»¹⁸։

Համաշխարհային երգիծական գրականության մեջ Փանջունին եղակի տիպար է իր անսահման անմարդկանությունամբ, եսապաշտությամբ, մակարածությունամբ, շարիք գործելու, հասարակությանը լուկ աղետ, վնաս, ողբերգություն բերելու և իրեն ջշինարար»՝ «փրկիչ» ու «հերոս» ճանաչելու արգահատելի ինքնահամոզվածությամբ։

Փանջունին ծնվում է արապիդոնցի վաճառականի ընտանիքում։ Հենց ծնված օրը մահանում է մայրը, հարազատներին պատճառելով վիշտ ու տխրություն։ Սա սկիզբն է աչն վործանքների ու ողբերգությունների, որոնք հետագայում պիտի տեղի ունենան «այծի կաթով»¹⁹ անվող, զրանից էլ՝ «ունայնամտության ու թեթևության» հակված ապագա «հերոսին» մեղքով ու ձեռքով։ Ուշ է սկսում խոսել, բայց «բանի կը մեծնար, աչքբան կ'աճեր խոսելու կատաղությունը», իսկ բժիշկները ախտորոշում են, թե «այս տղան միշտ պիտի խոսի»։ Սա աչն հատկությունն է, որ պիտի ողջ կյանքում ուղեկցեր գալիք «պրոպագանդիստին»։ Լեզուն բացվելուն պես՝ հակառակ իմաստով է ընկալում և գործածում բառերը՝ քանդում է, պնդելով, թե «կը շինեմ կոր»։ Զարդում է իրերն ու անոթները, հոր հանդիմանանքին պատասխանելով՝ «Երինեցի, հայրիկ»։ Սա աչն զլխավոր բնութագրական գիծն է, որ կազմում է փանջունիականության բուն էությունը։ Դպրոցում սովորելիս՝ դասերին բնավ չի հետևում, զբաղվում է «բնկերների հետ վիճելով ու ճառ խոսելով», ընդսմին՝ հաճախ քարով չարդում է ընդիմախոսի գլուխը՝ «զինքը համոզելու համար», թե հինգ անգամ հինգ հավասար է... հիսունի։ Սա սեփական տեսակետը և սկզբունքը՝ ուրիշներին պարտազրելու փանջունիական «մեթոդ» է։ Երբ լրանում է փանջունու 18 տարին, հայրը վախճանվում է, ունեցվածքը հավասար բաժին թողնելով երկու որդիներին։ Փանջունին չուտով վատնում է իր բաժինը, մինչդեռ ալագ հորայրը կրկնապատկում է։

«Այն ատեն ըմբռնեց, թե ի՞նչ զժոխային անարդարություն էր Բաբիրալլումը»²⁰ և թե ի՞նչ հրամայողական պահանջը էր հարստության հավասար բաժանումը։

17 Տե՛ս ն. Օ տյան, Ընկեր Բ. Փանջունի ի Մապլվար և Վասպուրական, ծագրականքն Աշ. Սարոբյան, 1938, Կահիրե, էջ 2 («Ենթաժություն»)։

18 Տե՛ս Թեոդիկի «Ամենուտ տարեցույցը», 1928, էջ 456։

19 Ի. Օ տյան, Ընկեր Բ. Փանջունի... (վերահիշյալ հրատարակությունը), էջ 10։

20 Ընդգծված է բնագրում, Բնագրային հետագա ընդգծումների մասին նշումներ չեն լինելու։

«Ու ա՛լ Տրապիզոնի խաղաղիկ սրճարաններուն մեջ, առտվնե մինչև իրիկուն, կը լսվեր Փանջունիի ձայնը, որ կը ղոռար, կը որոտար ընկերային անիրավութեանց դեմ, որ կը սպառնար կործանել, բնաջինջ ընել ամեն բան»:

Այսպես է սկսվում Փանջունու «ընկերվարությունը», որի անունից նա պիտի ջանար իրոք կործանել ամեն բան, ինչ որ կարողանար... Աղմկարար ու նախանձոտ նորաթուխ «սոցիալիստից» աղատվելու համար, եղբայրը նյութապես օգնում է նրան հեռանալու Տրապիզոնից: Ու Փանջունին ժնեում արձանագրվում է իրրև «սոցիալ-գիտություններու աղատ ուսանող»: Զորս տարվա ընթացքում ընդամենը... հինգ անգամ է հաճախում համալսարան, և այն էլ... դասախոսներին սուլելու կամ ծեծելու առիթ ներկայանալիս: «Կրթվում» է դա՛րեջրատներում: 1895/96-ի ջարդերին եղբայրը սնանկանում է, այլևս չի կարողանում փող ուղարկել Փանջունուն: Նյութական վիճակը ծանրանում է:

«— Եկուր քեզ հեղափոխական գործիչ շինենք,— ըսավ բարեկամը,— խոսելու ղյուրություն ունիս՝ այդ բավ է»:

Այսպես էլ «ծնվում» է նորընծա «հեղափոխական գործիչ» Փանջունին:

1908-ի «հուլիսից» հետո, երբ սեփական անձին միառժամանակ վտանդ չէր սպառնում, նա «Օղաբարի մը պես Պոլիս ինկավ»՝ ինքը իր հերթին «ճաթեցնելու» գլուխները «աղատությունը մենք բերինք» պարծենկոտ սնագովութիւմբ: Բայց ուշացել էր, «տեղերը բռնված էին», բացի այդ՝ «իր պերճախոսությունը չէր հասներ Ակնունդներու և Շահրիկյաններու պերճախոսության կրակին, որուն վարժված էին պոլսեցիները, ինչպես անշուշտ մենք՝ մեղավորներս ալ՝ օր մը պիտի վարժվինք ղոթիքի կրակին...»:

Այսպիսով, ժնեի դաշնակցականների միջավայրում «հեղափոխական» մկրտված Փանջունին չի կարողանում մրցել այդ կուսակցության «ջոջերի» հետ: Ուստի որոշում է, թե «Պոլիսեն ավելի՝ հարկ անհրաժեշտ էր գավաոր դարձեցնել, լուսավորել, հեղափոխել»: Ու կուսակցական «կենտրոնական մարմնի» կարգադրությամբ մեկնում է Մապլվար՝ «իր առաքելական պաշտոնը կատարելու»: Փանջունու հետագա արարքների մասին իմանում ենք նրա ծապլվարյան նամակներից, որոնք բոլորն էլ սկսվում են «Սիրելի ընկերներ» ու ավարտվում «Մի քիչ փող ղրկեցեք» բնորոշ արտահայտություններով և փանջունիական ոգով ու ոճով հյուսված երգիծական հոյակապ էջեր են:

Հարկ չկա մեկ առ մեկ թվելու այն ծիծաղելի, դավեշտա-ողբերգական դրությունները, որոնց մեջ ընկնում է Փանջունին՝ Մապլվարում վարելով իր ասած «շինարար ու փրկագործ», բայց իրականում կործանարար ու աղետաբեր «պաշտոնը»: Փանջունիական «շարքերի» շահատականությունների՝ «միթինկների», «մանիֆեստների», «թուղթիկների», «աղնիվ գաղափարական ծեծերի» հետևանքով մեծապես տուժած երբեմնի «ղեղեցիկ ու բարեբեր» գյուղն ավերվում է, թալանվում, ղյուղացիներից շատերը սպանվում են, ողջ մնացածները փախչում են հարևան շենքեր... Իսկ վտանդի պահին միայն հիշելով իր սերտած «Acta, non verba» («Գործ, և ոչ թե խոսք») նշանաբանը, Փանջունին թաքնվում է մի նկուղում, փրկում է մորթին ու վերջին նամակում սարսուռ ազդող սառնասրտությամբ և հրեշավոր պարծենկոտությամբ հաղորդում է «սիրելի ընկերներ»-ին. «Հաղթություն, հաղթություն: Վերջապես մեր կորովի գաղափարական աղնիվ պայքարը անպայման տարավ հաղթանակը. անկեղծ հեղափոխական սկզբունքը փրկվեցավ, թեև Մապլվար կործանեցավ... Ի՛նչ անել, կարելի չէ ձվաձեղ եփել առանց հավկիթ կոտրելու՝ կ'ըսե ֆրանսական առածը: Մապլվարի

ավերակներուն վրա այժմ կը բարձրանա մաքուր իտեալական պայքարի հոյակապ հաղթական մարտը:

Դա մի շոշափելի արդյունք է մեղ համար:

...Երևույթները մխիթարական ու քաջալերիչ են...»:

Իսկ ի՞նչ հետևանք է ունենում ծաղկավարյան «գործունեությունը» Փանջունու կյանքում, նրա դիրքի ու պաշտոնի համար: Այս մասին Ե. Օտյանը դառն հեղինակն էր հարցնում: «Ծաղկավարի հերոսը տակավին իր առույգ կենդանության մեջ արդեն իսկ անմահության լուսապսակովը դարդարված է: Իր համբավը անսահման է և իր հեղինակությունը՝ անվիճելի: Իր նամակները հեղափոխության ընթացություններու Հավատամքը կը կաղմեն և դրեթե օրենքի ույժ ունին»:

Ողբերգորեն ծիծաղելի այդ «հեղինակությամբ» էլ Փանջունին շարունակում է իր շահատակությունները Վասպուրականում: Վանից դրած նամակներում ու կարդացած «դասախոսություններում» առանձնապես դրսևորված են նրա «տեսությունները» կամ, ինչպես ինքը կասեր՝ «աշխարհահայացքները»: Դրանց համաձայն՝ ինքը և յուրայինները անսխալական կուռքեր են. «Զի՛ ուղղություն և նշանակություն և արտաքին մեր կուսակցության. գա մի կրեղո է»: «Մենք օրենք ենք և մեն դուրս ամեն ինչ ապօրինի է»: Ահա Փանջունու «տեսությունների» միջուկը: Ելնելով այդ «կրեղոյից», նա սխալ, վնասաբեր, աննորմալ է համարում, երբ ուրիշները հանրագուտ, հայրենանվեր, բարի գործ են կատարում ու փրփուրը բերանին որոտում է. «Մի՛ ապականեք, մի՛ մոլորեցրեք ժողովուրդը, թողեք, որ նա մաքուր մնա և ուղիղ սկզբունքներով առաջնորդվի»: Այսինքն՝ մարդկանց դատի ոչ թե նրանց գործերով, այլ խոսքերով: Զէ՞ որ ինքը խոսքով ձգտելով իբր «ավերականգնել կործանված հայրենիքը», գործով՝ հայրենի գյուղեր է կործանում, ձեռնալուծ «ազգասեր», գիմում է «96-ի ջարդերու կազմակերպիչ թուրք խուժանավար Համուս Աղենց Հասանին», հորդորելով հայերի թեկուզ «մի փոքր, այսպես ասած մի աննշան ջարդ կազմակերպել», որպեսզի վախենան և փող տան փանջունիներին...

«Կուսակցության պրեսքիժը» բարձրացնելու համար նա իր «մարտախումբերով» («Կայծակ», «Փայլակ», «Պայթուցիկ».— հմմ. Կուլտամյանցի խրտվիլակները) հարձակվում է ԲՃԻՃ գյուղի վանքի վրա, գրավում այն և իրեն հռչակում «աշխարհական վանահայր»: Ինչպես դաշնակցականները, որոնք գրավել ու թալանել են Աղթամարի և ուրիշ վանքեր, Փանջունին վաճառում է վանքապատկան ունեցվածքը (իրեր, անասուններ, գրչագրեր), կողոպուտն «օրինականացնում» է՝ կուսակցության «Հյուսիսային և Հարավային բյուրոներուն» հղած արձանագրություններով, իսկ ինքը գրպանելով մի կլորիկ գումար՝ մեկնում է Պոլիս:

Երգիծավեպի վերջին՝ երրորդ մասում Ե. Օտյանը պատմում է այն մասին, թե ինչպես 1915-ի ապրիլյան մեծ եղեռնին ինքը Փանջունուն հանդիպում է արաբական անապատները աքսորված տարագիր հայերի մեջ: Այստեղ Պապկավարի և Վասպուրականի «հերոսը» փոխում է մորթին, դառնում է իսլամացած «կատարյալ շավի արաբ մը»²¹: Հարմարվելով իրադրությանը, նա մերթ հանդես է գալիս իբրև «ծայրահեղ ուլթա ապակեղրոնացումի մարդ մը», ըստ որի միմիայն սեփական եսի մասին հոգալը «էգոիզմ կըլլա այն ատեն, երբ իբրև

21 Ե. Օտյան, Ընկեր Բ. Փանջունի տարագրության մեջ և իմ աշխարհահայացքները, Գահիրե, 1939, էջ 4 (այսուհետև մեջբերումների աղբյուրը չի նշվելու):

մաքող մեր անձր փրկել ջանանք, բայց երբ իբրև նալ ջանանք փրկել, այն ատեն կը լինի հալոնասիրական գործ, հեղափոխական ալիտ» (հմմ. Ինձեկտուրյան-ցի «միկրոկոզմայի տեսությունը»)։ մերթ վերստին ընդունում է «Կեզրոնացումի թեորիան», այսինքն՝ չի մերժում ուրիշների օղնությունը... Սակայն բոլոր դեպքերում մնում է նույն անուղղելի-անխրատելի ցնորատեսը, հաճախ ճառով դիմում է Ռեդ, թշվառ, հյուծված, երիթացած՝ հայ աքսորյալներին, կոչ անելով. «Չպե՛տք է հանդուրժել, չպե՛տք է խոնարհիլ, պետք է բողոքել, պետք է բռնենք ցույց տալ...»։ Ըստ որում՝ ճառում է ոչ թե կոնկրետ հանցավորների, այլ իր ասած «սեմպլիֆ տիպարների...», վերացականությունների՝ դեմ։

1918-ին, աքսորից աղատվելով, Փանջունին մեկնում է Երևան և դաշնակցական «անկախ հանրապետության» մեջ ստանձնում «փրոփականտի գործավարի» պաշտոնը։ Տալով փանջունիականության և դաշնակցական «կառավարողների» դիպուկ բնութագիրը, նա երգիծաբանին հղած նամակում գրում է. «...լծված եմ մի փրկարար աշխատանքի։ Ես պետք է քանդեմ հնությունը..., բոլոր հին աշխարհը, նրա ավերակների վրա կանգնեցնելու համար նորը. դա հեշտ գործ է։ Պիտի կաբողանա՞մ անել այդ ամենը. չեմ կարծի։ Թերևս հաջողվեմ միմիայն քանդել. այդ արդեն բավարարություն կուտա ինձ։ Իմ հաջորդը թող լծվի վերաշինության գործին։ Ես վայելում եմ քանդումի հեշտանքը, իմ հաջորդս թող կրի վերաշինության տաժանքը»։

Ե. Օտյանը նկատի ունի դաշնակցական կառավարության թողած ողբերգական ժառանգությունը։ Իդուր չէ, որ նա առաջինների շարքում սրտանց ողջունեց Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումը և սրամտորեն գրեց, թե ինչպես 1920-ի նոյեմբերին «անդրաշխարհային նավով» մեկընդմիշտ մեկնեցին դեպի պատմության գիբկը՝ իմպերիալիստական տերությունների սին խոստումները Հայաստանի «վիսոնյան սահմանների» մասին, նրանց այսպես կոչված «համակրական ցույցերը», թուրք «միլիճիների» (աղգայնականների) զավթողական պատերազմները և «Երևանի գաշնակցական հանրապետությունը»²²։ Պատահական չէ, որ նա անմիջապես ու անվարան միացավ Ա. Շիրվանդադեի, Ա. Չոպանյանի, Տ. Կամսարականի, Լ. Բաշալյանի և մյուսների հայտնի «Բողոքին» (1926)՝ ուղղված ընդդեմ դաշնակցականների, որոնք ստահող լուրեր ու հերյուրանքներ էին հորինում խորհրդային իշխանության հասցեին։ Օտյանն ինքը գրեց դաշնակցության «հայհոյալից հարձակումները»²³ մերկացնող ու դատապարտող մի շարք ֆելիետոններ։ Հակակոմունիստական գաղափարախոսության հենց այդ շրջաններում են ջանացել սխալ, անհիմն, միտումնավոր «մեկնաբանություններով» խեղաթյուրված լույսի տակ ներկայացնել «Ընկեր Բ. Փանջունի» երգիծավեսյր, որն իր սուր ծայրով ուղղված է իրենց դեմ։

«Ընկեր Բ. Փանջունին» այն հազվագյուտ երգիծական կոթողներից է, որ մեր ազգային հանճար Հովհաննես Թումանյանը «շատ էր հավանում և կար-

²² Ե. Օտյան, Երգիծական տարեցույց, Կ. Պոլիս, 1921, Ա տարի, էջ 4 և 1922, Բ տարի, էջ 3—6։

²³ «Արև» (Կահիրե), 1926, մարտի 24։ Հանդամանորեն տե՛ս Ա. Ա. Ասատրյան, Սոցիալիստական վերածննդի հայ գրականության պատմությունից, Երևան, 1959, էջ 136—141։

դում էր մեծ հաճություն»²⁴, իսկ Ա. Շիրվանղաղբի համոզմամբ՝ Օտյանի «ան-
«լան անմահացման համար բավական է միայն Սապկվարը»²⁵։ Երգիծավեպը
բարձր են գնահատել ճշմարիտ արվեստի երկրպագուները, իսկ օտյանական
քաղաքական երգիծանքի ուսանելի ավանգները օգնել են Ե. Չարենցին («Եր-
կիր Նաիրի», «Կասկածի թամաշա»), Դ. Դեմիրճյանին («Քաջ Նաղար»),
Վ. Թոթովենցին («Դոքաոր Բուրբոնյան», որն ստեղծված է Օտյանի բացա-
հայտ աղգեցությունը), Լեո Կամսարին (բալետ ֆելիետոններ) և ուրիշներին։
Երվանդ Օտյանը առաջադեմ մտածող էր, պայծառ հայրենասեր, ճշմարիտ
հումանիստ, աղգերի աղատություն, հաշտ ու խաղաղ կյանքի անկեղծ ջատագով։
Նրան բախտ չվիճակվեց ապրել Խորհրդային Հայաստանում, բայց մինչև իր
մահը, որը տեղի ունեցավ 1926-ի հոկտեմբերի 3-ին Կահիրեում, մնաց մեր
վերածնված ժողովրդի և աղատ հայրենիքի ջերմ բարեկամը։

Երվանդ Օտյանը ոչ միայն մեծ երգիծաբան էր, քաղաքական երգիծավեպի
անդուգական վարպետ, այլև «շենչող, կենսուրախ»²⁶, առինքնող անձնավո-
րություն, «բարի, իմաստուն և կտրիճ մարդ մը»²⁷, որը «բացառապես ազնիվ
ու մաքուր հոգի մը ունեիր»²⁸։ Ու մաքուր խղճով նա ծառայեց հայրենի գրակա-
նության սրբազան տաճարին, աշխարհին թողնելով իր ծով ժառանգությունը և
հավերժորեն անմահ անունը։

МАСТЕР ПОЛИТИЧЕСКОГО САТИРИЧЕСКОГО РОМАНА

(К 100-летию со дня рождения Е. Отяна)

С. А. МАНУКЯН

Р е з ю м е

Ерванд Отян (1869—1926) — исключительно плодовитый писа-
тель — сатирик. Его могучий талант блеснул во всех областях искусства
сатиры, в том числе в жанре политического сатирического романа. Им
были созданы первые шедевры этого жанра — «Пропегандист» и «То-
варищ Б. Панчунни», вошедшие в сокровищницу армянской литературы.

В статье дается краткий обзор жизни и творчества писателя и рас-
крывается содержание этих произведений.

В романе «Товарищ Б. Панчунни» Ерванд Отян остро высмеял
панчуизм. Суть панчуизма — противоречие между словом и делом по-
литических фразеров, догматиков, людей, которые под флагом «соци-
ализма» и «революции» порочат священные идеи и идеалы человечества.

²⁴ Նվարդ Թումանյան, Հուլիսի և օգոստոսի, Երևան, 1969, էջ 70, Հովհ. Թումանյանը
Ս. Օտյանի հետ անձամբ ծանոթացել և մտերմացել է 1919-ին Կ. Պոլիս այցելելիս և սիրել է
նրան իբրև գրողի ու մարդու։

²⁵ Ա. Շիրվանղաղբ, Երկերի ժողովածու, Երևան, 1961, հ. 9, էջ 204։ Շիրվանղաղբն
նույնպես անձամբ ծանոթ է եղել Ս. Օտյանին և իր հուշերում բուռն հիացմունքով է խոսում
նրա «մտավոր անսպառ պաշարի», «ոճի զարմանալի պարզության», մարդկային մեծ ու գեղեցիկ
հոգու մասին (տե՛ս նրա «Երվանդ Օտյան» հիշողությունները, Երկերի ժողովածու, հ. 8, էջ
517—535)։

²⁶ Լ. Բաշալյան, տե՛ս Բեռդիկի «Ամենուր տարեցույցը», 1928, էջ 456։

²⁷ Վ. Բեքեյան, նույն տեղում, էջ 458։

²⁸ Բեռդիկ, նույն տեղում, 1927, էջ 470։